ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

16 սեպտեմբերի 2014 թվական N: 225-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի թիվ 134-Ն որոշմամբ սահմանված «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման» կարգի 5-րդ կետի, 7-րդ կետի «ը» ենթակետի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2014 թվականի հիմնական միջոցառումների պլանի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2014 թվականի հոկտեմբերի 17-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի նախկին «Մշակույթի տան» տարածքում անցկացնել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն՝ «Երկրաշարժի հետևանքով փլուզված շենքում որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպումը» թեմայով:

2. Ուսումնավարժության ղեկավար նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ Սեյրան Պետրոսյանին:

3. Ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ նշանակել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետ Մարատ Սարիբեկյանին:

4. Ուսումնավարժությունում ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությունը և Ամասիայի հրշեջ փրկարարական ջոկատը.

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչությունը.

4) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Ղարս» մասնաճյուղը.

5) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Շիրակի գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղը.

6) «Աշոցքի ավտոտրանսպորտ և ճանապարհներ» փակ բաժնետիրական ընկերությունը.

7) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի տեղական ինքնակառավարման մարմինները:

5. Հանձնարարել՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետին՝

ա. մինչև 2014 թվականի հոկտեմբերի 6-ը ուսումնավարժության ղեկավարի հաստատմանը ներկայացնել ուսումնավարժության անցկացման փաստաթղթերի փաթեթը,

բ. կազմակերպել ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի,

գ. մինչև 2014 թվականի հոկտեմբերի 15-ը զեկուցել ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին.

2) ուսումնավարժության մասնակիցներին՝ պատրաստ վիճակի բերել ուժերն ու միջոցները, համալրել ստորաբաժանումները հաշվեցուցակային գույքով, սարքավորումներով և տեխնիկայով, ուսումնավարժության ընթացքում ապահովել անվտանգության կանոնների պահանջների կատարումը.

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետին՝ ապահովել ուսումնավարժության լուսաբանումը:

6. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

Իսկականի հետ ճիշտ է

Ֆ. ՅՈԼԱԿՅԱՆ